/

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՇՈՒՄ Գիտակրթական կենտրոն ՀԿ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Թեստերի կազման հատկորոշիչներն ու պարամետրերը

Կատարող՝ Կարինե Մատինյան Լևոնի

Արթիկի թիվ 4 հիմնական դպրոց, պատմություն

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

ԳՅՈՒՄՐԻ 2022

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. Թեստ, թեստային առաջադրանքներ, թեստերի դերը գնահատման համակարգում 6

1.1 Թեստ կազմելու սկզբունքները 6

ԳԼՈՒԽ 2. Թեստերի տեսակները 9

2.1 Ընդհանուր գիտելիքների ստուգման, տեղակայման, հայտորոշիչ, ամփոփիչ, թեստեր 9

2.2 Պատմութուն առարկայի թեստային առաջադրանքների կազման ու կիրառման իմ փորձը 11

Եզրակացություն 13

Գրականության ցանկ 15

Ներածություն

«Թեստերի կազման հատկորոշիչներն ու պարամետրերը: Թեստը (անգլերեն նշանակում է փորձարկում կամ ստուգում)խնամքով ընտրված հարցերի և առաջադրանքների ամբողջություն է, որը նախատեսված է չափորոշիչների համապատասխան սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների չափման, և արդյունքները մեկ կամ մի քանի հատուկ նպատակներով օգտագործելու համար: Թեստերի նմուշ օրինակների ներկայացում» թեման **արդիական է** այնքանով,որ օգտագործվում է ինչպես ընթացիկ գնահատման մեջ,այնպես էլ միասնական քննությունների ժամանակ:Եվ այսօր անհնար է պատկերացնել աշակերտների կողմից թեմայի յուրացման ստուգումը առանց թեստային աշխատանքների:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել թեստերի դերը գնահատման գործընթացում, կազման սկզբունքները, թեստերի տեսակները, թեստերի գնահատման կարգը, գնահատել ու վերլուծել սովորողների ձեռքբերումները և արժևորել նրանց ուսումնական գործունեությունը:

Մեր խնդիրը ուսումնական գործընթացում թեստերի պրակտիկ նշանակության ու դերի ուսումնասիրումն ու արժևորումն է:

Թեստը հարց է կամ առաջադրանք, կամ որոշակի նպատակով ընտրված հարցերի կամ առաջադրանքների խումբ,որի նպատակն է ճիշտ գնահատել սովորողների ձեռքբերումները և արժևորել նրանց ուսումնական գործունեությունը: Թեստերը բարձրացնում են գիտելիքների գնահատման գործընթացի արդյունավետությունը, բացահայտում են բացերը և խրախուսում ուսուցումը, ինչպես նաև ապահովում հետադարձ կապ ուսուցման որակի հետ: Ցանկացած ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է առաջին հերթին գիտելիքների որակի ստուգմամբ և գնահատմամբ: Էլեկտրոնային և առցանց ուսուցման պարագայում լայնորեն օգտագործվում է գիտելիքների ավտոմատացված ստուգումը, որն ապահովում է ստուգման ճկուն և զարգացած ձևերի կիրառում:

Գիտելիքների ավտոմատացված ստուգումը հիմնված է մանկավարժական թեստերի օգտագործման վրա, որոնց կազմումը գիտատար և աշխատատար խնդիր է և հիմնված է համապատասխան փորձառության վրա:Կրթական համակարգում թեստերն

օգտագործվում են ընդունելության քննությունների, գիտելիքների ընթացիկ ստուգման, կիսամյակային ստուգումների, հեռաուսուցման և քննությունների անցկացման գործընթացում:Քննությունների համակարգչային թեստավորման ձևը թույլ է տալիս ստուգել տվյալ առարկայից ունեցած գիտելիքները, ապահովում է գնահատականի օբյեկտիվությունը, ազատում է ուսուցչին գրավոր աշխատանքների աշխատատար ստուգումներից: Համակարգչային թեստավորման և գիտելիքների գնահատման օբյեկտիվությունը մեծապես կախված է թեստերի բովանդակությունից և որակից: Թեստերի մշակումը ուսուցիչների մեթոդական աշխատանքների ուղղություններից մեկն է:

Թեստերն անպայմանորեն ազդում են ուսուցման ամբողջ գործընթացի վրա:Այդպիսի ազդեցությունը կոչվում է թեստի հակադարձ ազդեցություն, որը կարող է լինել դրական կամ բացասական: Թեստերի դրական ազդեցությունն ուսուցման վրա գլխավորապես պայմանավորված է ստուգվող նյութի ընտրությամբ: Եթե այն ընդգրկուն է և արտացոլում է ինչպես ուսուցանված և սովորողների կողմից ընկալված նյութերը, ապա թեստի ազդեցությունը համարվում է դրական, իսկ եթե թեստը բացասաբար է անդրադառնում ուսուցման վրա, ապա ազդեցությունը բացասական է:

Գլուխ 1.

ԹԵՍՏ.ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ, ԴԵՐԸ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

1.1Թեստ կազմելու սկզբունքները

Թեստը որոշակի նպատակով հարցերի կամ առաջադրանքների խումբ է,որի նպատակն է՝ հնարավորինս ճիշտ գնահատել սովորողների ձեռքբերումները և արժևորել նրանց ուսումնական գործունեությունը: Հարցը առաջադրանքը կատարելու հանձնարարություն է՝ համապատասխան ցուցումներով,որն ակնկալում է պատասխան:

Թեստի միջոցով ստուգվում են սովորողի գիտելիքը, կարողությունները,հմտություններն ու արժեքային համակարգը: Թեստի նպատակն է՝պարզել, թե աշակերտը որքանով է յուրացրել ուսումնական նյութը, ապահովում է ռեսուրսների և առաջին հերթին ժամանակի խնայողություն, պարբերական կիրառման ժամանակ, սովորողների մոտ ձևավորում է կարգապահություն և ձգտում ծրագրային նյութի յուրացման գործում, նվազեցնում է սուբյեկտիվության աստիճանը, համարվում է ուսուցման գործընթացի անհատական և տարբերակված (շերտավորված)մոտեցման արդյունավետ եղանակ:

Թեստ կազմելիս պետք է հաշվի առնել մի շարք գործոններ.

- Թեստ կազմելիս պետք է լինի հուսալի կամ արժանահավատ: Հուսալի նշանակում է ստուգման և գնահատման հաստատունություն:Թեստը համարվում է հուսալի, եթե թեստի արդյունքները գրեթե նույնն են տարբեր օրերին նույն խմբին ստուգելու դեպքում,կամ միաժամանակ երկու համարժեք թեստերի տրամադրման դեպքում ստացվում են գրեթե նույն արդյունքները: Թեստի հուսալիությունը կարելի է հասցնել առավելագույնի, եթե յուրաքանչյուր սովորողի տրվի միանգամայն նույն հարցերի ամբողջականությունը և միանգանայն նույն պայմաններում, ինչպես նաև պարունակի մեծ քանակությամբ հարցեր, որոնցից յուրաքանչյուրը գնահատում է միևնույն կարողությունը,և գնահատումը թվանշանով արտահայտելիս հնարավոր լինի հետևել կանոնականությանը, այսինքն օյեկտիվությունը: Այսպիսով, թեստի հուսալիության հետ կապված քննարկման են ենթակա երկու հիմնական մեթոդաբանական խնդիրներ՝ ժամանակը և բովանդակությունը: Յուրաքանչյուր թեստին կից պետք է մշակեն գնահատման չափանիշներ:

- Թեստը պետք է լինի հավաստի, այսինքն, ստուգի այն գիտելիքը, կարողությունն ու հմտությունը, որը նախատեսված է:Հավաստիությունը վերաբերում է առաջադրանքի և նպատակի համապատասխանությանը: Հավաստիությունը առավելագույնին հասցնելու համար անհրաժեշտ է, որ

  ա) յուրաքանչյուր հարցով ստուգվի ուսումնական ծրագրով նախատեսված որևէ թեմայի յուրացումը կամ հմտության առկայությունը,

  բ) կիրառվի նպատակին համապատասխան առաջադրանք:[1]

  Թեստի հավաստիությունը նպատակին ծառայելն է, օրինակ, ինչ արժեք կունենան մեր ջանքերը, եթե հասնենք կայարան՝ գնացքի մեկնումից թեկուզ և մեկ րոպե ուշացումով:Թեստի արժևորման և կատարելագործման համար առավել հիմնարար բնութագրիչ է հավասստիությունը, քանի որ այն իր նշանակությամբ բացարձակ որակ է, որով արժևորվում և որակապես բարելլավում է թեստը:
- Թեստը պետք է լինի իրագործելի թե մարդկային ռեսուրսների, թե ֆինանսական, թե ժամանակի առումներով:
- Թեստը պետք է լինի արդյունավետ: Արդյունավետ թեստ նշանակում է նվազագույն առաջադրանքների քանակով և ժամանակի ծախսով ապահովել առավելագույն արդյունք: Բովանդակության տեսակետից արդյունավետ է այն թեստը, որն ընդգրկում է ուսումնական ծրագրով նախատեսված հիմնական կարևոր նյութը՝ ամփոփ ներկայացված որպես ծրագրային պարտադիր միջուկ:Թեստն արդյունավետ է, եթե բարդության աստիճանը համապատասխանում է թեստավորվողի պատրաստվածության մակարդակին:Համապատասխանել նշանակում է, որ միջին պատրաստվածություն ունեցող սովորողի համար թեստը պետք է ոչ շատ հեշտ և ոչ էլ շատ դժվար լինի:Թեստերում առաջադրանքները պետք է դասավորվեն պարզից դեպի բարդը սկզբունքով՝ըստ Բլումի ճանաչողական վարքի աստիճանակարգի(տաքսոնոմիայի)[1]:

[1]Գիտամեթոդական ամսագիր թիվ 2(89),2013թ. էջ 9

Թեստը կազմելիս առաջադրանքները ներառում են գիտելիքի պարզ իմացություն,ըմբռնում,կիրառում և ավարտվում բարձրակարգ ճանաչողական հմտություններով՝ վերլուծություն,համադրում և արժևորում:

Գիտելիք. սովորողը կարող է հիշել ուսուցման ընթացքում ստացած գիտելիքը կամ տեղեկատվությունը:

Ընկալում. սովորողը կարող է հասկանալ ստացած գիտելիքը կամ տեղեկատվությունը և մեկնաբանել :

Կիրառում. սովորողը կարող է կիրառել գիտելիքը կամ տեղեկատվությունը՝ օգտագործելով այն կոնկրետ գործողությունների մեջ:

Վերլուծություն. սովորողը կարող է վերլուծել գիտելիքը կամ տեղեկատվությունը, տրոհել մասերի, գտնել նրանց միջև եղած կապը, առանձնացնել կարևոր և ոչ կարևոր տեղեկատվությունը:

Համադրում. սովորողը կարող է օգտագործել տարբեր աղբյուրներից ստացած գիտելիքները կամ տեղեկատվությունը:

Արժևորում. Սովորողը կարող է գնահատել գիտելիքը՝ կատարելով դատողություններ, եզրահանգումներ:

Թեստը կիրառելուց առաջ օգտակար կլինի դրա զննումը հոգեբանական տեսանկյունից՝ հաշվի առնելով սովորողի տարիքային առանձնահատկությունները:

Թեստային առաջադրանքների բովանդակությունը պետք է համապատասխանի ուսումնական նյութերին: Թեստեր մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել ուսումնական նյութի բովանդակության ընտրության հետևյալ սկզբունքները.

- գիտելիքների առավել կարևոր, հիմնական տարրերի ընտրությունը,
- գիտական արժանահավատությունը
- բովանդակության լրիվությունը և ստուգման համար բավարար լինելը,
- թեստի բովանդակության փոփոխման հնարավորությունը՝ կապված ուսումնական առարկայի բովանդակության փոփոխությունների հետ
- աճող դժվարությունը (թեթև առաջադրանքներից,որոնք ճիշտ կատարում է սովորողների մեծ մասը, մինչև ամենադժվարները): Հայտնի է, որ անհնարին է միևնույն թեստով ճիշտ որոշել տարբեր պատրաստվածության աստիճան

ունեցող սովորողների գիտելիքները ստուգելու համար: Այսպիսով, կարող ենք ասել, որ թեստերը բարձրացնում են գնահատման գործընթացի արդյունավետությունը, բացահայտում են բացերը և խրախուսում ուսուցումը:

ԳԼՈՒԽ 2. ԹԵՍՏԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

2.1. Ընդհանուր գիտելիքների ստուգման, հայտորոշիչ, ամփոփիչ, տեղակայման թեստեր

Թեստը մշակելուց առաջ պետք է պատասխան տալ մի շարք հարցերի և առաջին հերթին այն հարցին, թե ինչ նպատակի համար է այն նախատեսվում: Այն պետք է համապատասխանի ստուգման և գնահատման նպատակին: Թեստը կարող է լինել՝

- Գիտելիքի ստուգման ընդհանրական թեստ
- Արժևորման նպատակով տրված թեստեր
- Հայտորոշիչ
- Սովորողների առաջադիմության ստուգման(Ամփոփիչ)
- Տեղակայման

Գիտելիքի ստուգման ընդհանրական թեստ(Սահմանափակ հնարավորություններով անհատների ընտրություն)

Այս թեստերը տրվում են հանրակրթական հաստատությունների շրջանավարտներին ավարտական վկայական տալու, բուհերի կամ հետազոտությունների համար ընտրություններ կատարելու նպատակով:Այս տեսակի թեստը կազմվում է կրթական հաստատություններից դուրս նախապես ստեղծված նութագրիչների հիման վրա համապատասխան պետական մարմնի կողմից հատուկ ընտրված հանձնաժողովի ուժերով սովորողների ծրագրային նյութի յուրացման մակարդակը ստուգելու նպատակով:

Արժևորման նպատակով տրվող թեստեր, որոնց միջոցով գնահատվում են ուսումնական ծրագրի արդյունավետությունը որակյալ կրթության համակարգում:

Հայտորոշիչ,որը տրվում է պարբերաբար՝ հայտորոշելու սովորողների թույլ և ուժեղ կողմերը՝հետագայում ուսուցումը բարելավելու նպատակով:Ուսուցանող նպատակով կարելի է օգտագործել կարճ ժամանակի համար նախատեսվող հայտորոշիչ թեստեր,որոնց արդյունքները միավորներով չեն գնահատվում:[2]Դրանց իրական նպատակն է ուսումնասիրած թեմայից կամ թեմայի մի մասից սովորողների կողմից նյութի յուրացման աստիճանի պարզումը,նյութը վատ յուրացրած կամ չյուրացրած սովորողների բացահայտումը՝ նրանց գիտելիքների, կարողությունների և հմտությունների մասին տեղեկություն ստանալն է, որը հնարավորություն կտա ժամանակին կատարել անհրաժեշտ շտկումներ և բարելավել նրանց ուսուցումը:

Կարճ ժամանակի համար նախատեսվող հայտորոշիչ թեստերն ավելի ճկուն են և դրանց արդյունքներն ավելի հուսալի և օբյեկտիվ են վերլուծությունների համար:Նման թեստերում ընդգրկվող առաջադրանքների հարցերը լինում են հետևյալ տեսակների՝

- ընտրովի պատասխանով,
- կարճ պատասխանով,
- համապատասխանեցման,
- բաց թողածը լրացնելու հարցերով:

Հայտորոշիչ թեստը տրվում է յուրաքանչյուր սովորողի կողմից տվյալ դասանյութի յուրացման աստիճանը պարզելու և նրա հետ հետադարձ կապի հաստատման նպատակով:Աշխատանքը վերլուծելիս անհրաժեշտ է յուրաքանչյուր սովորողի ներկայացվի նյութի յուրացման իր մակարդակը: Այդ վերլուծությունները պետք է այնպես արվեն, որ օգնեն սովորողին բարելավելու իր արդյունքները, թերությունները շտկելու,ուսուցումը խթանելու համար:[3]

Հայտորոշիչ թեստ կազմելիս պետք է հաշվի առնել հետևյալը.

1. հայտորոշիչ թեստն օգտագործվում է ուսուցման ընթացքում՝ թեման բացատրելուց առաջ, կամ թեմայի մի մասն ուսուցանելուց հետո
2. հայտորոշիչ թեստի բոլոր առաջադրանքները ստուգում են մեկ հիմնական գիտելիք

[2]Գիտամեթոդական ամսագիր թիվ 2 (89),2013թ. էջ 11

[3]Ն. Ադամյան <<Դասավանդման մեթոդիկայի արդի տեխնոլոգիաներ>>Ուսումնամեթոդական ձեռնարկ:Երևան 2018թ., 264 էջ

3. հայտորոշիչ թեստի բոլոր առաջադրանքները վերաբերում են միայն ուսուցանվող թեմային
4. առաջադրանքների բարդության աստիճանը պետք է լինի պարզից՝ միջին, այնպես, որ աշակերտների համար թեստը լինի հեշտ
5. թեստի տևողությունը 15-20 րոպե:

Ամփոփիչ թեստ.

Ամփոփիչ թեստերը ստուգողական բնույթի են:Ամփոփիչ թեստի հիմնական նպատակը ամբողջական թեմայի կամ կիսամյակի ընթացքում անցած ծրագրային նյութի յուրացման մակարդակի ստուգումն ու ամփոփումն է առարկայական չափորոշչի և ծրագրի պահանջներին համապատասխան:

Տեղակայման թեստ(Սովորողի ուսումնառության տեղը բնորոշող)

Տեղակայման թեստերը տրվումեն դասընթացի սկզբում՝ սովորողներին ըստ իրենց գիտելիքների և կարողությունների մակարդակի տեղակայելու համար: Այն կազմակերպվում է ուսումնական տարվա առաջին կամ երկրորդ շաբաթվա ընթացքում: Սովորողների գիտելիքները ու պատրաստվածության ընդհանուր մակարդակը պարզելուց հետո, ուսուցիչը պլանավորում է իր հետագա անելիքը և աշխատանք էտանում բացթողումների շտկման համար:

2.2 Պատմություն առարկայի թեստային առաջադրանքների կազմման ու կիրառման իմ փորձը

Թեստային առաջադրանքները խիստ բազմազան են: Յուրաքանչյուր ուսուցիչ ինքն է ընտրում առաջադրանքների տեսակները: Պատմության ժամերին թեստային

առաջադրանքներ կազմելիս նախապատվությունը տալիս ենք ներքոհիշյալ առաջադրանքների կազմանը և կիրառմանը.

1.մեկ ճիշտ պատասխանի ընտրությամբ առաջադրանքներ

2. կառուցված պատասխանով առաջադրանքներ

3. համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ

4. հաջորդականություն պահանջող առաջադրանքներ

5. պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն պահանջող առաջադրանքներ

6.աշխատանք տեքստի հետ

7.ազատ շարադրանք:

Իմ մանկավարժական պրակտիկայում բոլոր դասարաններում կիրառում եմ և՛ հայտորոշիչ, և՛ ամփոփիչթեստեր: Ամփոփիչ թեստեր անցկացնում եմ .

- որևէ թեմա ,ենթաթեմա կամ մի քանի փոքր թեմաներ ստուգելու և ամփոփելու նպատակով, որն իր մեջ պետք է ընդգրկի այդ թեմայի առանցքային հարցերը,
- կիսամյակը ամփոփելու նպատակով, որը տրվում է կիսամյակի վերջում՝ բացահայտելու կիսամյակի ընթացքում ուսումնասիրած ծրագրային ամբողջ նյութի յուրացման աստիճանը:

Ամփոփիչ թեստ կազմելիս հաշվի եմ առնում մի շարք առանձնահատկություններ.

- տալիս եմ ուսումնական փուլի վերջում,
- հարցերը ձևակերպում եմ պարզ և մատչելի,
- առաջադրանքների տեսակները բազմազան են,
- յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է մյուսներից անկախ,
- առաջադրանքները տրված են պարզից դեպի բարդ սկզբունքով,
- առաջադրանքների կատարմանը հատկացված է ավելի շատ ժամանակ:

Իսկ հայտորոշիչ թեստն օգտագործում եմ ուսուցման ընթացքում՝ թեման բացատրելուց առաջ կամ թեմայի մի մասը բացատրելուց հետո: Հայտորոշիչ թեստի անցկացումը բավականին արդյունավետ է, քանի որ սա հնարավորություն է տալիս ստուգել սովորողների նախնական գիտելիքները,և դրանց հիման վրա կառուցել նոր նյութը: Հայտորոշիչ թեստի միջոցով տեղեկություն եմ ստանում աշակերտի կողմից նյութի

յուրացման աստիճանի մասին, աշխատում եմ տեղ գտած թերությունները վերացնելու,ուսուցման մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:Հայտորոշիչ թեստի միջոցով պարզում եմ յուրաքանչյուր աշակերտի դժվարությունները ուսումնական նյութի ուսուցման և յուրացման ընթացքում: Հայտորոշիչ թեստի նպատակն է պարզել,թե յուրաքանչյուր աշակերտ որքանո՞վ է յուրացրել ուսումնական նյութը, ուսուցման ընթացքը որքանո՞վ է արդյունավետ եղել:

Եզրակացություն

Այսպիսով ՝ մեր ուսումնասիրությունից եկանք այն եզրակացության, որ թեստերի միջոցով գնահատվում են սովորողների գիտելիքները, կարողությունները և հմտությունները: Ցանկացած թեստ պետք է նպաստի սովորողի ուսուցման բարելավմանը և առաջընթացին: Առաջարկում ենք հաճախակի օգտագործել բազմատեսակ թեստերը, հաշվի առնելով ուսումնական գործընթացում թեստերի դերը և

կիրառությունը, գնահատման գործընթացում այնպիսի առավելությունները.ինչպիսին են.

- հնարավորություն է տալիս ուսուցչին փոքր մասերով ստուգել ուսումնական նյութի յուրացումը,
- կարողանում է արագ գնահատել մեծ թվով սովորողների,
- պարզելու սովորողի <<թույլ կողմերը>>, շտկել թերությունները,խթանել ուսուցումը,նպաստել սովորողի առաջընթացին,
- հնարավորություն է տալիս պարզելու յուրաքանչյուր սովորողի դժվարությունները:

Թեստերը կազմելիս կարևորել՝

- առաջադրանքների տիպերի ճիշտ ընտրությունը,
- առաջադրանքների պարզից դեպի բարդ սկզբունքի կիրառումը,
- բովանդակության լրիվությունը և ստուգման համար բավարար լինելը,
- գիտական արժանահավատությունը (վիճելի տեսակետներից զերծ մնալ):

Թեստերը՝ որպես չափման գործիք, լավագույնս կծառայեն իրենց նպատակին , եթե կազմվեն նպատակային, առարկայական չափորոշչի և ծրագրային նյութին համապատասխան, հաշվի առնվեն թեստ կազմելու պահանջները:

Գրականության ցանկ

1.Գիտամեթոդական ամսագիր թիվ 2(89), Երևան 2013 ԿԳՆ

2.Ն. Ադամյան: Դասավանդման մեթոդիկայի արդի տեխնոլոգիաներ: Ուումնամեթոդական ձեռնարկ: Երևան:<<Էդիթ Պրինտ>>հրատ.2018,264 էջ

3.Օ. Միքայելյան,Ս. Միքայելյան: Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման միջոց:Երևան2010

4.Հ. պատմություն և Համաշխարհային պատմության ընթացիկ գնահատման առաջադրանքների նմուշների ժողովածու: Երևան 2007

5.Ուսուցիչների վերապատրաստման ձեռնարկ:Երևան